ԿՐԹԱԿԱՆ

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՋԵՋԵԼԱՎԱ. «ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ ՉԻ ԾՐԱԳՐՎՈՒՄ»

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան, ներկա փուլում մանկապարտեզների դաստիարակները ավելացված աշխատավարձ չեն կարողանա ստանալ. նրա խոսքով, աշխատավարձի ավելացումն ու կարգավորումը կիրականացվի մասնագիտական զարգացման սխեմային համապատասխան:

- Մանկապարտեզների մանկավարժների աշխատավարձի հարցով, մեզ մոտ մասնագիտական զարգացման սխեման դեռեւս մշակված չէ: Երբ այն կմշակվի, հենց այդ սխեմայով էլ կիրականացվի աշխատավարձի չափի կարգավորումը,- հայտարարեց նախարարը:

Ինչ վերաբերում է դպրոցի մանկավարժների աշխատավարձին, ապա նրա խոսքով, այդ հարցն էլ կարգավորվում է սխեմային համապատասխան: Ինչպես պարզվեց Վրաստանի 2018 թվականի պետական բյուջեի նախնական տարբերակի նախագծի քննարկումից, չնայած, հաջորդ տարի կրթության նախարարության ֆինանսավորումն ավելացվում է 62 միլիոն լարիով, ուսուցիչների բազային աշխատավարձի ավելացում չի ծրագրվում:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆԸ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀԵՏՈ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ՔԵԶ, ՋԻՎԱՆ



*Ջիվան Մկրտչյանն այս տարի ոսկե մեդալով ավարտեց Նինոծմինդայի շրջանի Փոկայի հանրային դպրոցը (տնօրեն՝ Սահակ Մադոյան): Դրանից առաջ, 9-րդ դասարանը գերազանց առաջադիմությամբ եզրափակելու համար, նա ստացել էր անձնական օգտագործման համակարգիչ:*

Մեր Ջիվանը դեռեւս տարրական դասարաններում էր աչքի ընկնում իր մտավոր եւ հոգեւոր բարձր հատկանիշներով: Տղան դասարանից դասարան էր փոխադրվում բարձր առաջադիմությամբ, բայց երբեք չէր բավարարվում ձեռք բերածով, իր առջեւ նորանոր նպատակներ էր դնում եւ աշխատում իրագործել դրանք:

Նրա մոտ բնածին ընդունակությունները սերտորեն զուգակցվում են աշխատասիրության հետ եւ տալիս ցանկալի արդյունք:

Ասենք, որ ուսումնառության ընթացքում ստացել է չորս տասնյակից ավելի գովասանագրեր եւ սերտիֆիկատներ, դիպլոմներ ու պատվոգրեր: Հատկանշական է վրաց լեզվի իմացության B աստիճանի սերտիֆիկատը, որն ստացել է 60 մասնակիցների մեջ՝ գրավելով առաջին պատվավոր հորիզոնականը: Այն ստորագրված է արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու կողմից, յոթից ավելի սերտիֆիկատ է ստացել արդարադատության նախարարության հանրակրթական կենտրոնի կողմից:

Բացի մեր երկրի արդարադատության նախարարի ստորագրությամբ դիպլոմներից, մեր Ջիվանը մեծ հպարտությամբ բոլորին ցույց է տալիս եւ Վրաստանի կրթության ու գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավայի ստորագրությամբ դիպլոմը, որն ստացել է «Ինչպես եմ տեսնում իմ ապագա Վրաստանը» նոմինացիայում մրցանակաբաշխության ժամանակ: Ուշագրավ է, որ վրաց լեզվի ձեռագրերի մրցույթում (1600 մասնակից) Ջիվանն ստացել է ամենաբարձր մրցանակը՝ հատուկ կրծքանշան ու գրիչ: Իսկ գրիչի վրա ոսկե տառերով փորագրված է «Ջ.Մկրտչյան»:

Ասենք նաեւ, որ մեր Ջիվանը սիրում է ստեղծագործել հայերեն եւ վրացերեն: Այս բնագավառում նա վաստակել է պատվավոր սերտիֆիկատներ առաջին տեղը զբաղեցնելու համար: Ջիվանն ունի պարգեւներ նաեւ Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կողմից:

Մասնակցել է Հովհ.Թումանյանի ծննդյան 140-ամյակին նվիրված մրցույթին. գիպսից կերտել է «Փարվանան», ստացել պատվոգիր եւ հուշամեդալ: Տղայի արխիվում կան նաեւ մի քանի պատվոգրեր ու նվերներ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» գրական միության կողմից (նախագահ՝ Ժ.Սնխչյան):

Շրջկենտրոն Նինոծմինդայում կազմակերպված վրաց լեզվի եւ գրականության օլիմպիադայում Ջիվանը զբաղեցրել է առաջին տեղը: Մասնակցել է նաեւ համավրացական օլիմպիադաներին, եւ այս տարի շրջկենտրոնից միայն ինքն է անցել երկրորդ փուլ՝ քիմիա եւ կենսաբանություն առարկաներից:

Ուզում ենք, որ «Վրաստանի» ընթերցողն իմանա՝ Ջիվանը «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթում գրավել է առաջին տեղը՝ ստանալով ոսկե մեդալ: Մասնակցել է «Ճանապարհ դեպի Եվրոպա» խորագրով մրցույթին եւ ստացել պատվոգիր: Սիրում է երգել (ունի դիպլոմ շրջանում կազմակերպված «Փայլող աստղեր»-ին մասնակցելու համար), ինտելեկտուալ խաղեր (ունի լավագույն մասնակցի պատվոգիր):

Վերջերս մասնակցել է «Փոկա» վավերագրական ֆիլմի նկարահանումներին (վրաց լեզվով), 200-ից ավելի վրացի մասնակիցների մեջ նա գրավել է չորրորդ տեղը՝ ստանալով պատվոգիր, սերտիֆիկատ եւ, որպես պարգեւ, վերջերս Թբիլիսիում հրատարակված գեղարվեստական գրքեր:

Վերեւում թվարկած ձեռքբերումներն ունեցան իրենց օրինաչափ շարունակությունը: Այս տարի Ջիվանը հաջողությամբ հանձնեց Թբիլիսիի Ի.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի ընդունելության քննությունները եւ ընդունվեց իրավագիտության ֆակուլտետը: Այժմ շնորհալի տղան 100 տոկոսանոց գրանտով (անվճար) սովորում է համալսարանում:

Հաջողություններ քեզ, Ջիվան: Հույս ունենք, որ այդտեղ նույնպես բարձր կպահես քո դպրոցի, քո ուսուցիչների պատիվը՝ օրինակելի վարքով ու բարձր առաջադիմությամբ եւ, իհարկե, համալսարանից հետո՝ որպես բարձրակարգ իրավաբան, սպասում ենք քեզ քո հարազատ Փոկայում:

*ՆԱԴՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
*Ուսուցչուհի*

*գ.Փոկա*
*Նինոծմինդայի մունիցիպալիտետ*

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՋԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՕՐԵԱԿԱՆ

## ԱԹՈՌԻՆ ԱՆՎՆԱՍ ՆՍՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

***Վերջերս գիտական հոդվածում կարդացի, որ նստակյաց աշխատանքը պետք է սահմանափակվի որոշակի ժամանակով: Հետաքրքիր է՝ ինչպե՞ս կարելի է սահմանել ժամանակային այդ հատվածը:***

***Մ.Ստեփանյան***

***Թբիլիսի***

Ամերիկացի գիտնականները որոշել են այն առավելագույն ժամանակամիջոցը, որի ընթացքում մարդը կարող է, առանց առողջությունը վնասելու, գտնվել նստած վիճակում: Հետազոտությունը հրապարակվել է Annals of Internal Medicine-ում, ինչի մասին հայտնել է Թերապեւտների ամերիկյան քոլեջը:

Մասնագետները խորհուրդ են տալիս նստած վիճակում գտնվել կես ժամից ոչ ավելի: Նստած աշխատանքի դեպքում, փորձագետները խորհուրդ են տալիս, յուրաքանչյուր 30 րոպեից հետո, անել ոչ մեծ ընդմիջում, օրինակ՝ վեր կենալ աթոռից եւ կատարել կարճատեւ զբոսանքներ:

Հեղինակները նման եզրակացությունների են հանգել, ուսումնասիրելով՝ նստած վիճակի ժամանակի ու կյանքի տեւողության միջեւ կապը, 45 եւ ավելի բարձր տարիքի շուրջ 8000 մարդու մոտ:

Ստացված տվյալները վկայում են, որ, օրվա միջին հաշվով 16 ժամից, որը բաժին է ընկնում արթուն վիճակին, շուրջ 12,3 ժամը մարդը գտնվում է նստած վիճակում: Մահացության նվազագույն վտանգ է եղել նրանց մոտ, ովքեր առնվազն յուրաքանչյուր կես ժամը մեկ դուրս են եկել նստած վիճակից:

ԳԼՈԲԱԼ

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ



***Այն, որ մոլորակի պատմության մեջ անցել են մի շարք քաղաքակրթություններ, ապացուցված փաստ է: Փաստ է նաեւ այն, որ այդ քաղաքակրթությունները վերացել են բնական ինչ-ինչ աղետների պատճառով: Հետաքրքիր է՝ ներկայիս քաղաքակրթության համար, ի՞նչ սպառնալիքներ կան:***

***Ս.Մուրադյան***

***Նինոծմինդա***

Հարվարդի համալսարանի աստղագիտության բաժանմունքի ղեկավար Աբրահամ Լոեբը եւ նրա գործընկեր Մանասվի Լինգամը (ԱՄՆ) գնահատել են այն ժամկետները, երբ Արեգակի վրա մարդկային քաղաքակրթության համար ավերիչ գերբռնկում տեղի կունենա: Համապատասխան հետազոտությունը մատչելի է էլեկտրոնային պրեպրինտների arXiv.org գրադարանում:

Գերբռնկումները, որոնց հետեւանքով Արեգակը շրջակա միջավայր է արտանետում շուրջ 1034 erg, գիտնականների գնահատումներով, տեղի են ունենում երկու հազար տարի պարբերականությամբ: Վերջին անգամ համանման երեւույթ է տեղի ունեցել 775 թվականին, դրա կրկնությունն սպասվում է 750 տարի հետո:

«Մենք եզրակացնում ենք, որ գերբռնկումներից վտանգը բավականաչափ գնահատված չէ, եւ որ մարդկությունը կարող է դառնալ դրանց սկսվելու վկան, ինչն ավերիչ տնտեսական ու տեխնոլոգիական կորուստների կհանգեցնի շուրջ հազար տարվա ընթացքում»,- հրապարակման մեջ հայտնում են հեղինակները:

Մասնավորապես, արեգակնային գերբռնկումները կարող են լիովին շարքից հանել երկրաշուրջ արբանյակները եւ էլեկտրական համակարգերը: Արեգակնային գերբռնկումներն ամենամեծ վտանգ են ներկայացնում երկրագնդի օզոնային շերտի համար, որը կենսոլորտը պաշտպանում է ուլտրամանուշակագույն ճառագայթներից:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ՁԳՈՒՄ ԵՔ, ՈՐ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՆՈՊԱ Է ՍՊԱՍՎՈՒՄ

***Ինչքան էլ ծանրաբեռնված լինի օրը, ժամանակ հատկացրեք հանգիստ սնվելուն. մի շեղվեք, կենտրոնացեք միայն սննդի վրա:***

Օգտակար սնունդ ընտրեք՝ միս, հավկիթ, ձկնեղեն, բանջարեղեն, պանիր: Այս ամենը կշեղի ձեզ քաղցրավենիքը սուրճի հետ համատեղելու ցանկությունից:

Փորձեք նստել ուղիղ մեջքով, քանի որ դա բարելավում է՝ ուղեղի սնուցումը արյան հոսքի կարգավորման հաշվին:

Դուրս եկեք զբոսանքի:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՕՐԳԱՆԻԶՄԸ ՀՈՒՇՈՒՄ Է

***Մեր զգացմունքները մեզ կարող են հիվանդացնել: Բժիշկները, հոգեբանները, սոցիոլոգները վաղուց պարզել են, որ սխալ կենսակերպը կարող է հանգեցնել սրտի հիվանդության, աշխատանքի հանդեպ խեղված վերաբերմունքը՝ ուղեղի հիվանդության, սիրային հաճախակի սթրեսները՝ թոքերի ու վահանաձեւ գեղձի, նախանձը՝ մարսողական համակարգի, չափազանց պատվասիրությունը՝ մակերիկամների հիվանդության:***

Խանդը սպառնում է երիկամների աշխատանքին, վախը՝ լյարդին, խորամանկությունը՝ ստամոքսին, սեռական անվստահությունը՝ ենթաստամոքսային գեղձին (կարող է շաքարախտ զարգանալ): Անցյալի վրա սեւեռվելը ողնաշարային խնդիրների կհանգեցնի, ագահ մարդկանց մոտ էլ՝ հնարավոր է լեղապարկի խնդիր առաջանա, իսկ կասկածամիտներն ավշային հիվանդություններ կարող են ունենալ: Մելանխոլիայի հակումը զգալիորեն մեծացնում է սրտի նոպաների ռիսկը:

Բալթիմորի համալսարանի մասնագետների անցկացրած բազմամյա հետազոտությամբ պարզվել է, որ խրոնիկական դեպրեսիայից տառապողները 4,5 անգամ ավելի հաճախ են հիվանդանում սրտի հիվանդություններով, իսկ ակտիվ մշակութային կյանք վարողների մոտ, հակառակը, խթանվում է իմունային համակարգի աշխատանքը:

Ասվածը չի նշանակում, որ պետք է ծայրահեղությունների դիմել՝ անմիջապես ազատվելու համար այս կամ այն բացասական հուզումից: Պետք է հանգիստ, առանց նյարդայնանալու վերլուծել ստեղծված իրավիճակը, եւ պատկերացրեք, որ ինքնազգացողության բարելավում կզգաք: Հաճախ օրգանիզմը հուշում է զարգացող հիվանդության մասին: Ցավոք, այդ ազդանշաններին անդրադառնում ենք հիվանդության ակնհայտ դառնալուց հետո:

Այսպես, օրինակ՝ եղունգների փխրունությունը խոսում է վահանաձեւ գեղձի աշխատանքի խանգարման եւ օրգանիզմում հանքային աղերի անբավարարության մասին: Եղունգների վրա ակոսիկների առաջացումը ենթաստամոքսային գեղձի, բարակ աղիքի կամ հոդաբորբի մասին է հուշում: Շերտերը կարող են առաջանալ սթրեսի հետեւանքով: Իսկ հարթ եղունգները սրտի թուլության մասին են հուշում: Եթե ուտելուց հետո գլխացավ է առաջանում, ու հետազոտություններով գործնականում առողջ մարդ եք համարվում, ապա պետք է ալերգենը փնտրել: Եթե լեզուն շոգեխաշած տեսք ունի, ապա դիմեք բժշկի: Գուցե դա վարակիչ հիվանդության հետեւանք է, որի մասին անգամ գլխի չեք ընկնում: Լեզվի այրոցը խոսում է սակավարյունության, վիտամինների պակասի ու վատ արյան մասին: Եթե գիշերը քաշվում է ոտքը, ապա դա օրգանիզմում մագնեզիումի անբավարարության հետեւանք է:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

## ԻՆՉՊԵ՞Ս ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀՈԳԵԿԱՆ ԴՐԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐ

***Հոգեկան դրական որակներ զարգացնելու համար, առաջին հերթին, պետք է հասկանաք ինքներդ ձեզ, այսինքն՝ կենտրոնանաք ձեր ուժեղ եւ դրական կողմերի վրա:***

Սա նշանակում է նաեւ, որ ստիպված եք ընդունել ձեր որոշ հատկանիշներ, որոնք ի վիճակի չեք փոխելու, եւ աշխատել այն հատկանիշների վրա, որոնք հնարավոր է բարելավել: Փորձեք նաեւ հետեւություն անել նախկինում ունեցած անհաջողություններից եւ թույլ տված սխալների մասին: Եթե դա հաջողվի, կտրուկ կնվազի դրանք կրկնելու հավանականությունը:

Հոգեկան առողջությունը բարելավելու մեկ այլ ճանապարհ էլ կա. ընդունել շրջապատի մարդկանց այնպիսին, ինչպիսին նրանք կան: Բոլորն էլ թերություններ ունեն, սակայն բոլորի մեջ էլ հնարավոր է գտնել հիացմունքի արժանի գծեր: Սովորելով գտնել հենց այդ դրական որակները այլ մարդկանց մեջ՝ դուք նպաստում եք սեփական հոգեկան առողջության կատարելագործմանը:

## ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ



Գործն է անմահ, լավ իմացեք, որ խոսվում է դարեդար, //Երնեկ նրան ով իր գործով կապրի անվերջ, անդադար:

***ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆ***
***(1869-1923)***
***Հայ բանաստեղծ***

Չեմ ցանկանում տանել երբեք ստրկական անարգանք:

***Ն.ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ***
***(1817-1845)***
***Վրաց բանաստեղծ***

Վատ ուսուցիչը մատուցում է ճշմարտությունը, իսկ լավը՝ սովորեցնում է, թե ինչպես պետք է այն գտնել:

***ԱԴՈԼՖ ԴԻՍՏԵՐՎԵԳ***
***(1790-1866)***
***Գերմանացի փիլիսոփա***

Կրթված մարդը տարբերվում է անկիրթից նրանով, որ շարունակում է կարծել, թե կրթությունը դեռեւս թերի է:

***ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԻՄՈՆՈՎ***
***(1915-1979)***
***Ռուս խորհրդային գրող***

Իմաստուն մարդը տարիք է առնում, բայց չի ծերանում:

***ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ***
***(1802-1885)***
***Ֆրանսիացի գրող***

Բանաստեղծի համար միայն ոգեշնչումը բավական չէ. պահանջվում է զարգացած մտքի ոգեշնչում:

***ՖՐԻԴՐԻԽ ՇԻԼԼԵՐ***
***(1759-1805)***
***Գերմանացի բանաստեղծ***

Սովորելու արմատները դառն են, իսկ պտուղները՝ քաղցր:

***ԱՐԻՍՏՈՏԵԼ***
***(մ.թ.ա. 384-մ.թ.ա. 322)***
***Հույն փիլիսոփա***

Կանանց համար ամեն ինչ անում են այն տղամարդիկ, ովքեր չգիտեն, թե կինը կոնկրետ ինչ է ցանկանում:

***Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Օթարի տղեն բջջային հեռախոսով Հունաստանից զանգահարում է իր ընկեր Աշոտին: Վերջինս անհանգստանում է, որ նա երկար է խոսում. փող շատ կծախսի:*

*- Դարդ մի անի, Աշոտ ջան, կողքիս էրկու վրացի են քնած, նրանցից մեկի հեռախոսով եմ խոսում: Հենց որ փողը պրծավ, էն մյուսի հեռախոսը կվերցնեմ:*

*☺ Մի անգամ Վարազդատը ինչ-որ գործով արագ-արագ գնալիս է լինում: Մի տարեց կին կանգնեցնում, հարցնում է.*

*- Տղա ջան, ժամացույց ունե՞ս:*

*- Հա՛, բա ո՞նց, մոքիր ջան, ունեմ,- սիրալիր պատասխանում է Վարազդատն ու, առանց ժամն ասելու, շտապում իր գործին:*

*☺ Հովհ.Թումանյանի «Թագավորն ու չարչին» անցնելիս՝ աշակերտուհին, չընկալելով՝ «Օ՜, ինչ ասեղ, իսկն օձի քիստ» տողի իմաստը, դիմում է ուսուցչին.*

*- Իսկն ի՞նչ է:*

*- Իսկը, աղջիկ ջան, ասեղի սուր ծերն է,- վստահ պատասխանում է ուսուցիչը:*

*☺ Գնորդներից մեկը փայտամշակման կոմբինատի տնօրեն Գառնիկին բողոքում է.*

*- Ձեր արտադրած աթոռները մի շաբաթ էլ չեն դիմանում, քանդվում են:*

*Տնօրենը փորձում է կատակի տալով մեղմել գնորդի արդարացի դժգոհությունը.*

*- Կարող ա՞, վրեն նստել եք...*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Հոկտեմբերի 25-ին Երեւանում աշխատանքն սկսեց Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստը:*

Նիստի աշխատանքին մասնակցեցին ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը, ՌԴ կառավարության նախագահ Դմիտրի Մեդվեդեւը, Ղրղզստանի Հանրապետության վարչապետ Սապար Իսակովը, Բելառուսի Հանրապետության վարչապետ Անդրեյ Կոբյակովը, Ղազախստանի Հանրապետության վարչապետ Բակիջան Սագինտաեւը եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵԱՏՀ) կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանը: Նեղ կազմով նիստի անցկացումից հետո, այն շարունակվել է պատվիրակությունների մասնակցությամբ:

Օրակարգային հարցերի շրջանակում, քննարկման առարկա են դարձել ներքին շուկաների, առեւտրի, ագրոարդյունաբերության, էներգետիկայի եւ ենթակառուցվածքների ոլորտներում համագործակցության զարգացման հնարավորությունները:

Նիստի արդյունքում, ստորագրվել են տարբեր ոլորտներում ԵԱՏՄ անդամ պետությունների փոխգործակցությունն ամրագրող մի շարք փաստաթղթեր:

## ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

*Հոկտեմբերի 25-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամների՝ Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի, ՌԴ կառավարության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի, Ղրղզստանի վարչապետ Սապար Իսակովի, Բելառուսի վարչապետ Անդրեյ Կոբյակովի, Ղազախստանի վարչապետ Բակիջան Սագինտաեւի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանի հետ, ովքեր Երեւանում մասնակցեցին Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին:*

Հանրապետության նախագահը ողջունեց ինտեգրացիոն միավորման անդամ երկրների վարչապետերին եւ վստահություն հայտնեց, որ Երեւանում անցկացված միջկառավարական խորհրդի նիստն արդյունավետ կլինի ու կծառայի եվրասիական ինտեգրացիան առաջ մղելու շահերին, ինչպես նաեւ կնպաստի երկու շաբաթ առաջ ԵԱՏՄ հերթական գագաթաժողովում բարձր մակարդակով ձեռքբերված պայմանավորվածությունների իրականացմանը:

Սերժ Սարգսյանը կարեւորեց նաեւ նման ձեւաչափով հանդիպումների ժամանակ ոչ պաշտոնական շփումները, որոնք նպաստում են նիստը հյուրընկալող երկիրն ավելի լավ ճանաչելուն:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամները շնորհակալություն հայտնեցին Հայաստանում խորհրդի նիստի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծված հրաշալի պայմանների համար եւ նշեցին, որ տրամադրված են հանգամանորեն քննարկել արդիական բոլոր հարցերը, գտնել համատեղ լուծումներ՝ իրականացնելու այն որոշումները, որոնք ընդունվում են ԵԱՏՄ պետությունների ղեկավարների գագաթաժողովներում:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԴՄԻՏՐԻ ՄԵԴՎԵԴԵՎԻՆ

*Հոկտեմբերի 24-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահ Դմիտրի Մեդվեդեւին:*

Հանդիպմանը Հայաստանի նախագահը, ողջունելով հյուրին, ընդգծեց, որ ՌԴ վարչապետի այցը կայանում է ՀՀ եւ ՌԴ միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի տարում, գոհունակությամբ փաստեց, որ այդ ընթացքում հսկայական աշխատանք է իրականացվել:

- Ես վստահ եմ, որ Ձեր պաշտոնական այցը կդառնա եւս մեկ կարեւոր քայլ մեր հարաբերությունների հետագա ամրապնդման ճանապարհին,- ասաց Սերժ Սարգսյանը:

Իր հերթին, ՌԴ կառավարության ղեկավարը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար եւ փոխանցեց նախագահ Վլադիմիր Պուտինի ողջույններն ու բարեմաղթանքները:

Մինչ այդ, կայացավ Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի եւ ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի հանդիպումը: Բանակցությունների արդյունքներով, երկու երկրների միջեւ ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերում են կապի եւ հաղորդակցության, արտակարգ իրավիճակների ոլորտներին, ինչպես նաեւ երկու երկրների տարածաշրջանների միջեւ համագործակցությանը:

## ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԸ ԻՍՐԱՅԵԼԻ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՊԱՐԳԵՎԻ ԱՍՊԵՏ

*Իսրայելի նախագահի նստավայրում տեղի է ունեցել ֆրանսահայ լեգենդար շանսոնյե Շառլ Ազնավուրի պարգեւատրման արարողությունը՝ Ազնավուրի ընտանիքի կողմից Երկրորդ աշխարհամարտի տարիներին հրեաների եւ մյուս ժողովուրդների պաշտպանությանն ուղղված ջանքերի համար:*

Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլինը Ռաուլ Վալենբերգի անվան միջազգային հիմնադրամի մրցանակներ է հանձնել Շառլ Ազնավուրին եւ նրա քրոջը՝ Աիդային, ում պարգեւը ստացել է Ազնավուրի որդին՝ Նիկոլասը:

Իսրայելի նախագահը նշել է, որ Ազնավուրի երաժշտության երկրպագուն է, մասնավորապես, ընդգծելով, որ «Լա Բոհեմա»-ն իր ամենասիրելի երգն է: Ռիվլինը շեշտել է, որ Ազնավուրի ընտանիքը Երկրորդ աշխարհամարտի տարիներին «թաքցրել է նացիստների կողմից հետապնդվող մի շարք մարդկանց, իսկ նրա քույր Աիդան ներգրավված է եղել փրկարարական աշխատանքներում»:

## ԴՅՈՒՐԱՑՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ

*Հայաստանի Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունելու համար, քննարկում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը:*

Օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է գործող օրենքը 2015թ. սահմանադրական փոփոխություններին համապատասխանեցնելու, ինչպես նաեւ իրավակիրառ պրակտիկայում առաջացած որոշ օրենսդրական բացերը կարգավորելու անհրաժեշտությամբ: Նախագծով առաջարկվում է հստակեցնել Հայաստանի քաղաքացիներից ծնված երեխաների կողմից քաղաքացիություն ձեռք բերելուն վերաբերող դրույթները, ինչպես նաեւ սահմանել Հայաստանի քաղաքացի չհանդիսացող ծնողների ազգությամբ հայ երեխաների կողմից Հայաստանի քաղաքացիություն ձեռք բերելու առավել պարզեցված ընթացակարգը: Քաղաքացիություն ստանալու նպատակով, հնարավոր ձեւական ամուսնությունները բացառելու համար, նախատեսվում է Հայաստանի քաղաքացու հետ օրենքով սահմանված կարգով առնվազն երկու տարի գրանցված ամուսնության մեջ գտնվելու պահանջ, ընդ որում՝ առնվազն մեկ տարի Հայաստանում գտնվելու պայմանով:

Վերանայվում է ՀՀ քաղաքացիությունը հավաստող փաստաթղթերի ցանկը: Հանվում է քաղաքացիությունը հավաստող վկայականը, քանի որ այն տրամադրման ընթացակարգ օրենսդրությամբ նախատեսված չէ, եւ դրա անհրաժեշտությունը չկա:

ՀՀ քաղաքացիության հիմքերը ճանաչող իրավակարգավորումներն առաջարկվող նախագծով եւս հստակեցվում են:

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ԱՄՆ

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը հովվապետական այցով գտնվում է ԱՄՆ-ում: Այցի շրջանակներում, նա այցելել է «Վաչե Մանուկյան» դպրոց եւ հանդիպել աշակերտության հետ: Վեհափառ Հայրապետն այցելեց նաեւ «Արարատ տուն», որտեղ խնամք է մատուցվում հայ տարեցներին: Հայոց Հայրապետը խնամատար հաստատությանը նվիրաբերեց Գեւորգ Սուրենյանցի «Տիրամոր» սրբապատկերի կրկնօրինակը: Այնուհետ, Նորին Սրբության յեռամբ կատարվեց «Արարատ տան» նոր մասնաշենքի հուշաքարի օրհնության արարողությունը:*

### ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԶՈՀԵՐԻ ՀԻՇԵՏԱԿԻՆ

*Հայաստանի խորհրդարանը մեկ րոպե լռությամբ հարգեց հոկտեմբերի 27-ի ռմբագործության զոհերի հիշատակը: Նման առաջարկով հանդես եկավ Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը:*

*- Այսօր հոկտեմբերի 27-ի ռմբագործության տարելիցն է: 18 տարի առաջ, Ազգային ժողովի շենքում տեղի ունեցավ ռմբագործություն, որը Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանի, վարչապետ Վազգեն Սարգսյանի, Ազգային ժողովի փոխնախագահներ Յուրի Բախշյանի, Ռուբեն Միրոյանի, պատգամավորներ Միքայել Քոթանյանի, Արմենակ Արմենակյանի, Հենրիկ Աբրահամյանի, նախարար Լեոնարդ Պետրոսյանի կյանքը տարավ: Խնդրում եմ մեկ րոպե լռությամբ հարգել նրանց հիշատակը,- ասաց Բաբլոյանը: Պատգամավորները հոտնկայս, մեկ րոպե լռությամբ, հարգանքի տուրք մատուցեցին հոկտեմբերի 27-ի ռմբագործության զոհերի հիշատակին:*

### «ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - 300» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտում աշխատանքն ավարտեց «Վենետիկի Մխիթարյան միաբանություն-300» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպվել էր Հայաստանի ստիտուտի նախարարության, ՀՀ ԳԱԱ հայագիտական եւ հասարակական գիտությունների բաժանմունքի, Երեւանի պետական համալսարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի, Վենետիկի Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ եւ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ: Գիտաժողովի բացմանը ներկա էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, ստիտուտի նախարար Հրանուշ Հակոբյանը, պաշտոնական այլ անձինք: Գիտաժողովի ավարտին նշվեց, որ առաջիկայում կտպագրվեն գիտաժողովի զեկուցումները «Բազմավեպ» հայագիտական հանդեսի բացառիկ համարում:*

### ԵԱՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

*Հոկտեմբերի 25-ին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն ընդունեց ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպշիկին: Հանդիպմանը քննարկվել են Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում տիրող իրավիճակին վերաբերող մի շարք հարցեր:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(27 հոկտեմբերի)

*Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 481,00 | 483,50 |
| ԵՎՐՈ | 557,00 | 564,00 |
| ՌՈՒԲԼԻ | 8,27 | 8,41 |

*Հոկտեմբերի 20-ի համեմատ, ԱՄՆ դոլարի կուրսը ավելացել է 0,5 դրամով:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՀՈԿՏԵՄԲԵՐ

*29.10.2017. Տոն Խաչի Գյուտի*

Խաչի Գյուտը Քրիստոսի խաչափայտին նվիրված չորս տոներից է:

327 թվականին բյուզանդական Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Հեղինեն, Տիրոջ խաչը գտնելու նպատակով այցելում է Երուսաղեմ: Հուդա անունով մի հրեա օգնում է կայսրուհուն գտնել Քրիստոսի խաչվելու վայրը՝ Գողգոթան, որտեղ որոնումների արդյունքում հայտնաբերվում են Հիսուսի եւ նրան խաչակից երկու ավազակների խաչերը: Տիրոջ խաչը ճանաչելու համար մի պատանու դիակ հերթով դնում են դրանց վրա, որոնցից մեկի վրա պատանին հարություն է առնում, եւ այդպես ճանաչվում է Տերունական խաչը: Հեղինեն բարեզարդում է Երուսաղեմի սրբազան վայրերը, իսկ Գողգոթայում կառուցում Սուրբ Հարության եկեղեցին, որտեղ հետագայում զետեղվում է Տիրոջ խաչափայտը:

*30.10.2017. Սամոսատում նահատակված Սուրբ Հիպիրիքյանների հիշատակության օր*

*31.10.2017. Սեւերիանոս Սեբաստացու, Բաբելա Ծերունու եւ նրա ութսունչորս աշակերտների հիշատակության օր*

## ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

### ԼԵՎՈՆ ՈՒԶՈՒՆՅԱՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ԱՍՊԵՏ

Ռուսաստանի Դաշնության Թատերական գործիչների միությունը, ընթացիկ տարվա հոկտեմբերին, Մոսկվայում կայացած «Մոնո-ներկայացում «Solo» 10-րդ Միջազգային թատերական փառատոնին, «Ես Նիկոլայ Գումիլյովն եմ» պիեսի ստեղծման եւ ռեժիսորական ու դերասանական բարձրարվեստ մատուցման համար, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի ռեժիսոր Լեւոն Ուզունյանին պարգեւատրել է փառատոնի «Դիպլոմ» մրցանակով:

«Ես Նիկոլայ Գումիլյովն եմ» պիեսը Լեւոն Ուզունյանը գրել եւ բեմադրել է 2016թ., բանաստեղծի 130-ամյակի առթիվ, իսկ 2017-ի սկզբներին Երեւանի «Մոնո-ներկայացումների «Արմոնոն» Միջազգային փառատոնին՝ իբրեւ լավագույն բեմականացում, արժանացել է մրցանակի:

Մեր ընթերցողին հիշեցնենք, որ Լեւոն Ուզունյանը Վրաստանի Թատերագետների միության կողմից ճանաչվել է 2016 թվականի երկրի ամենաարգասավոր ռեժիսորը: Նա արժանացել է Հայաստանի թատերական գործիչների ոսկե մեդալի:

*«Վրաստան» թերթի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Լեւոն Ուզունյանին միջազգային բարձր պարգեւի համար եւ մաղթում ստեղծագործական նոր հաղթանակներ:*

## ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

### ԳՅՈՒՄՐԵՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Հոկտեմբերի 21-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում, տեղի ունեցավ Հայաստանի Գյումրի քաղաքից հյուրընկալված գեղանկարիչ, Գեղագիտության ազգային կենտրոնի Գյումրու մասնաճյուղի հիմնադիր-տնօրեն, պրոֆեսոր Սուսաննա Մկրտչյանի մանրանկարների անհատական ցուցահանդեսը:*

Այցելուների թվում էին նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանության առաջին քարտուղար Արթուր Սարգսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

«Ավետումից համբարձում կամ Մեծ պահք» խորագիրը կրող հավաքածուն ամփոփում էր Աստվածաշնչյան դրվագներով ստեղծված ծանոթ ու նաեւ անծանոթ պատկերներ՝ «Քրիստոսի մուտքը», «Խորհրդավոր ընթրիք», «Ոտնլվա» «Քրիստոսի խաչելությունը», «Խաչից իջեցնելը», «Սուրբ Սարգիս», «Սուրբ Մարկոս»՝ շուրջ 25 կտավ:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

### ՆՎԻՐՎՈՒՄ Է ՎԻԳԵՆ ՎԱՐԴԱՆՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Հոկտեմբերի 29-ին Թբիլիսիի Art Gallery-ում (Ուզնաձե 13, Վորոնցովի կամրջի մոտ) կբացվի նկարիչ Վիգեն Վարդանովի բացառիկ աշխատանքների ցուցահանդեսը: «Գտած իրերի արվեստը» խորագրով ցուցահանդեսում կներկայացվի նկարչի 50-ամյա ստեղծագործական գործունեության նմուշները:*



Ցուցահանդեսում կներկայացվեն շուրջ 60 կոլաժներ եւ ասամբլեաժներ, որոնք հատկապես առանձնացվել են ցուցահանդեսի համար: Նշենք, որ Վիգեն Վարդանովը երբեք չի ցուցադրել եւ չի հրապարակել իր գործերը. մշտապես կրկնելով՝ «Հետո...»: Հատկանշական է, որ նկարչի կենդանության օրոք այդ «հետոն» այդպես էլ չիրականացավ: Նա վախճանվեց անցյալ տարի, 75 տարեկան հասակում: «Հետոն» եկավ վախճանից մեկ տարի անց, երբ նկարչի ընտանիքը նրա ստեղծագործությունը ներկայացրեց լայն հասարակայնությանը:

Վիգեն Վարդանովի գործերի ցուցահանդեսը կշարունակվի մինչեւ 2017 թվականի նոյեմբերի 6-ը:

Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչությունը, սակրեբուլոն, Նինոծմինդայից ու Ախալքալաքիից Վրաստանի խորհրդարանի պատգամավորի Բյուրոն եւ «Վրաստան» թերթի խմբագրությունը ցավակցում են մունիցիպալիտետի վարչության ֆինանսաբյուջետային ծառայության ղեկավար Սամվել Արզումանյանին, նրա սիրելի մոր՝

*Յուղաբեր Արտավազդի ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ*

մահվան կապակցությամբ:

## ԽԱՉԲԱՌ



**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Թբիլիսահայ անվանի նկարիչ Ալեքսանդր ...-Մելիքով: 5.Բեռնակիր կենդանի: 8.Լիճ Հայաստանում: 9.Ա.Բակունցի պատմվածքներից՝ «... աղջիկ»: 10.Հացահատիկը պահելու համար մեծ պարկ: 11.Վախկոտ հերոս «Սասունցի Դավիթ» էպոսում: 13.«... հետ վերցրին լիք բաժակները եւ մեր հայրերը» (Հովհ.Թումանյան): 14.Իր գեղեցկությամբ հայտնի կինոդերասան՝ ... Դելոն: 15.Գետ Հյուսիսային Ամերիկայում: 18.Ցուցական դերանուն: 20....ել, ...ված: 21.Վրացական ֆիլմ՝ «...ի այրին»: 23.Նեցուկ, հենարան, օգնական: 24.Վրաց երգչուհի ... Գուրցկաիա: 27.Իտալիայի դրամական միավորը: 29.Շնչուղիների հիվանդություն: 31.Հայերենի վերջածանց: 34.Հունգարական ավտոբուս: 35.Նար-Դոսի վիպակներից՝ «Ես եւ ...»: 36.«Վալս» երաժշտական ստեղծագործության հեղինակ հայ կոմպոզիտորի անունը: 37.Տոնական թխվածք: 39.Ունայն, դատարկ: 40.Մասիս, Աբուլ: 42.Մաշտոցյան այբուբենի տառ: 43.Քաղաք Հայաստանում: 46.Ռուսաստանյան քաղաք: 48.Պ.Սեւակի «Եվ ... Մաշտոց մի անուն» երկը: 49.Մերձբալթյան մայրաքաղաք: 52.Մշուշ, մառախուղ: 54.Հայկական գինու տեսակ: 55.Ե'վ Երվանդը, ե'ւ Հրաչյան: 56.Այս տառի թվային արժեքը 3,14 է: 57.Գրող, գրականագետ ... Մամյան: 58.Ջաջուռցի հանրահայտ որմնանկարիչ:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Գերմանացի հռչակավոր կոմպոզիտոր: 2.Ֆրանսիացի ազգային հերոս ... դը Արկ: 3.Սահման, սահմանագիծ, եզր: 4.Ներկա, գոյություն ունեցող: 5.Գետ Վրաստանում: 6.Գրական ստեղծագործության տեսակ: 7.Բեյրութահայ անվանի նկարիչ Հարություն ...:12.Առարկայի դուրս ցցված մաս: 13.Մեծն Լոռեցու դուստրերից: 14.Վանա լճի կղզի: 16.Խանութների ցանց Երեւանում: 17.Ոչ ճիշտ, թյուր, անճշտություն: 19.Խորհրդային Միության ժողովուրդների «հայրը»: 22.Ուսուցչապետ, դպիր: 25.Վրաց նկարիչ Փիրոսմանին (անունը): 26.Քանդակագործներ ե'ւ Շիրազը, ե'ւ Սարգսյանը: 28.Անվանի դերասանուհի ... Ասրյան: 29.Անֆիլտր ծխախոտ: 30.Գետ Արցախում: 32.Վրաց երգչուհի ... Բրեգվաձե: 33.Բեյրութում լույս ընծայվող հայատառ օրաթերթ: 38.«Կտոր մը երկինք» ֆիլմի գլխավոր հերոսը: 41.Խորհրդային Հայաստանի օրհներգի բառերի հեղինակը: 44.... դատաստան: 45.Հայաստանի անվանումներից: 47.1851թ. Կ.Պոլսում լույս տեսած՝ Հովսեփ Վարդանյանի հայերեն տառերով, թուրքերեն վեպը: 50.«Մախմուր ..., խաս ու ղումաշ ատլաս հագին» («Աղվեսն ու ագռավը»): 51.Ամերիկահայ գրող, լրագրող ... Բոհջալյան: 53.Զրոլորտի բաղկացուցիչ մաս:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 4.Լատիշ: 7.Դողալ: 9.Տաղանդ: 11.Կարաչայ: 12.Սերգո: 15.Դասաեւ: 16.Խոժոռ: 17.Թակում: 20.Մազերատի: 23.Վան: 24.Լղար: 25.Լեհուհի: 28.Կորաքանոն: 29.Ասկյար: 30.Մեա: 32.Ձեթ: 34.Տապան: 37.Ալրմաղի: 38.Պարս: 39.Անհատ: 40.Ստրաբոն: 43.Կալի: 44.Ամիգո: 45.Մրտիմ: 46.Վշտակից:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Մոլախոտ: 2.Մատադոր: 3.Վկայական: 4.Լիդա: 5.Տկար: 6.Շալո: 8.Լաչառ: 10.Դաս: 13.Եկար: 14.Գյուտ: 17.Թերեք: 18.Կայուն: 19.Միջին: 20.Մայոր: 21.Ալմաստ: 22.Շաղկապ: 25.Լացել: 26.Հայ: 27.Հոնեղ: 28.Կաթնատամ: 30.Մասսիվ: 31.Արարատ: 32.Ջամբիկ: 33.Թիկնոց: 35.Ակներ: 36.Ապակի: 41.Ամա: 42.Ոգի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445